զգզէ բոլոր բնութիւնս մարդոյ 'ի յերեսս երկրի՝ ստանալով վարձ յաւելորդութեամբ գործոց իւրոց երբեմն սով, երբեմն սրածութիւն երբեմն ջրհեղեղ և Շարժ և մահ տարաժամ և այլն, որպէս պատմէ մեզ Աստուածաշունչ գիրք պատիժն մեղաց մերոց ստացելոց 'ի անցելոյ ժամանակի, և թէպէտ ընդ տեսակս աչաց և լուր ականջաց մերոց տեսանի և լսի բազում ոք թագաւորեցեալ 'ի վերայ ժողովրդոց բազմաց 'ի յերեսս երկրի. այլ 'ի սմայ գտանի զանազան կերպիւ թագաւորութիւնք և իշխանութիւնք, բայց ես ասացի վասն թագաւորին յայնմիկ, զինայ և թագաւորութիւնն իւր որ 'ի արտաքոյ բնութենէ և յաւելուածու եռացումն ամբարիշտ մտաց իւրոց բարբառոսութեամբ, վասն զի փոքացեալ թագաւորն այն, որում ինքնակալ մտօք հաւատայ զինքն թագաւոր 'ի վերայ բանական բնութեան մարդոյ, ուրեմն հարկաւոր լինիցի նմայ. զի ունիցի յինքն անմահութիւն և կարող լինիցի տալոյ կեանս և վախճան յաւիտենական 'ի բանական բնութեամբ ժողովրդեան իւրոյ, այլ որպէս սկզբանէ արարածոց մինչև ցայսօր ոչ ոք այսպիսի զօրութեամբ մարդ երևեցաւ 'ի ներքոյ արեգական և ոչ ոք գոլ կարէ, բայց արարիչն Աստուած թագաւոր երկնի և երկրի, որ ունի զանմահութիւն բնակեալ 'ի լոյս անմատոյց, որպէս վասն այս մտածութեան բերան Տեառն խօսեցաւ ընդ պատուէրս իւր առ